



21. ՀԱՄՓԵՐԹՈՆԸ ԳՅԱՆՔ Ի

Կըի, չըլի մե թաքավոր: Էտ թաքավորի մալը-գանքը հաղդը-հեսսաբե աշմիշ կըլի: Հար մարթ մե պան կըսիրա: Էտ թաքավորն էլ շատ էր սիրալի դուրդուց պախել: Տար դըշերի մեջը մե դուդի կար, թաքավորը դարը շատ էր ուզելի: Էտ դուդի դուշը իսանի ջուռա բաշրես էր զուոցալ: Դե դուդի դուշըն էլ օգգա օլքայելեն էր պոնե պերե:

Մե մուղաթ ընցավ, մեկ օր դուդի դուշը թաքավորին ասաց.—Թաքավո՞ր, մըննաթ եմ անելի ընձի ուռուսդաթ տաս, մե մուղաթ էթամ իմ մամլաքաթը, շուռ իկամ, տըսնամ, էլը կըթող-նեմ, կիկամ...

Թաքավորն ասեց.—Իրավունք ի, քե՛լ:

Դուդին իր մնաս պարով արեց թաքավորին, թուավ ջունա բեր մանգիլ թեխս ուր վելայաթը: Վաթանը քաղցր կըլի: Ախըր ճոչերն ասիր են.

Աշըդ, վաթան շիրինդըր,
Քոհնա քաթան շիրինդըր,
Ղարիբլը ջաննաթ օլսա,
Գենա վաթան շիրինդըր⁵:

Էտենց էլ մեր դուդին, որ խասավ ուր վաթանը, ինգավ կետինը, խողերի մեջ թաքալավ, ասեց. «Օխիսայ, վաթան ջան, խողիտ, ճրիտ, խոտիտ դուրբամ ըլեմ, քաղցր վաթան ջան...»:

Խուլասայի շուռ էկավ, ուր թայտաշներին տըսավ, հասրաթը խանեց սրտեն: Մե մուղաթ ընցավ, դե թաքավորին խոսք ի տվե, տըկա իկա ախըր: Դուդին ուր վաթանեն առեց, պերանը մե ջուխտ բարի կոճ, տառցավ, էկավ թեխս ուր թաքավորը:

5 Աշուդ, վաթանը (հայրենիք, ծննդավայր) քաղցր է,

Հին կտավը քաղցր է,

Օտարությունը թեկուզ դրախտ լինի,

Ելի վաթանը քաղցր է (Թ. Ա.):

Մալիսաս օրերի մեկ օրը Էկավ խասսավ, կնաց թաքավորի մոտը, խանեց էտ ուր օլքայեն պերած բարի կոճերը տվեց թաքավորին, թե.—Թաքավորի ապրաց կենաս, էտ կոճերը տո՛ւ թու տնզեն, կանանչեն, ըլեն ծառ, տար հունարը հետով կիմանաս:

Թաքավորն էր դուղիյի իկալու վրան շատ ուրախացավ, դար պերած կոճերն էլ առեց, կանչեց ուր բաղվանին, կոճերը տվեց, թե.—Կտանես թաքավորական գուլի բախչայի մեջը կըտնզեց, աղեկ կըբեջարես, տսնանք վեռչը իշ տուս կիկյա:

Բաղվանը տանելի, կոճերը տնզելի: Մե վախտ ըսնելի, էտ կոճերեն կանանչան էրկու խատ խորոտ թունզաներ:

Մե քանի տարի ընցավ, եփ որ թունզաները առչի բարը տվին, դուղին թաքավորին ասեց.—Թաքավորի ապրաց կենա, թունզաները բար են տրվե, հենց որ կրխասնի, ասա' թու բաղվանը պերի, մե բարը տո՛ւ կե, մեկը թու թաքուհին ուտի:

Թաքավորն ասեց.—Շատ աղեկ:

Ընցավ, Էկավ աշնան թեխը, բարերը աղեկ խասսան, որ խասսան, թաքավորը ասեց.—Մե պերե՛ք տսնանք, տանք իշթար զատ են:

Թաքավորին մե չար նախանձ վազիրը կըլի: Էտ վազիրը թաքավորի դուղիյին շատ ուզելու խմար շատ էր նախանձելի, փախլթոնեքիչ էր մնալի պատրովի: Էտ չար վազիրը ուզելի դուղիյին թաքավորի աշկեն քըցի, էտ սաբարով էլ էթալի էտ ծառի բարերեն քաղելի, վերցելի, աղոյւելի, պերելի տալի թաքավորին ասելի, թե. «Թաքավոր ապրաց կենաս, ըմմեն պանի ավատալ չիլնի, տու էտ բարը ուտելեն առաջ մե ջըռիքի', տու թու ուրիշն ուտի, նոր տո՛ւ կե»:

Էտենց էլ անելի թաքավորը, բարը տալի մե գեղեցի, գեղեն ուտելի, թե չէ, ալբը հալը տեղբրտեղը խատնելի... Թաքավորը հորսոտավ հոյքմ արեց, որ դուղիյին ըսպանեն: Վազիրն էլ զաթի ծեռ էր ըշկալի, ալբը հալը խասնելի դուղիյին պոնելի խատուցելի:

Նոր թաքավորը ասելի:—Կանչե՛ք բաղվանը թու իկա:

Դար միտքը էն էր, որ բաղվանին ասի, որ էթա են ծառերը կը-ոի, թալի էնթե:

Բաղվանը Էկավ կայնավ առաջը. —Թաքավոր ապրաց կենաս, ընձի ինչե՞ս կանչե:

Թաքավորն ըշկաց, թե.—Քեզի վա՞զ ի կանչե, տու վա՞զ ես:

—Բը, թաքավոր, ես քո բաղվանն եմ, վա՞զ եմ:

—Ի՞շթար իմ բաղվանն ես, այ տղա, —ասաց թաքավորը, —իմ բաղվանը փըճրդած մե խալիվոր ի, տու մե ջահիլ-ջիվան մարթ ես: Ես իմ խալիվոր բաղվանին եմ կանչե, քեզի չեմ կանչե...

—Թաքավոր ապրաց,—ասաց բաղվանը,—ես ներողթոն եմ խնմրելի, մե դալաթ ի արեր եմ, տու իմ մեխկը տըկը ներես: Ես հենց քո էն խայիվոր բաղվանն եմ, որ կամ, համա էն դուդիյի պերած կոճի ծառերի էս տարվա տված բարեն ես ինան կնիկս մեյ-մեկ կերանք, էտենց ջահկլցանք...

Թաքավորը մնաց զարմացած. —Քելե՛ք, —ասաց, —բաղվանի կնդան կանչե՛ք:

Կանչին, պերին: Թաքավորը տսավ թազգա խամավոր խարս:

—Այ տղա, —ասաց բաղվանին, —էն բարեն էլ չի՞ մընալի:

—Մե չոռս խատ կա, վերցեր եմ, պախեր եմ, —ասաց:

—Դե քել, պե՞նձի, —ասաց թաքավորը:

Բաղվանը կնաց, պերեց: Թաքավորը կանչեց թաքուհուն, կանչեց վազիրին, սաղ պալատական ճոչերին, հըմմընի տեմը վերցեց էտ բարերեն մեկը, զինքը կերավ, մեյն էլ տվեց թաքուհուն: Հենց որ կերան պըռծան, ալբըհալը թաքավորը, թաքուհին տառցան հարմեկը քսան-քսանըխինդ տարեկան գանջ ջահելներ, դադ կայնան...

Նոր թաքավորը տառցավ վազիրին խառցուց, թե. —Բա ի՞նչ էլավ, վազի՛ր, ինչի՞ չըմեռանք մենք...

Վազիրը ամոթու ծեն չի խանելի:

Թաքավորը ծունդը թիեց, ափսոսցավ դուդիյի սպանելու խմար, ամը էլ հո՞ւր կըխասնի: Թաքավորը հոսիրեն կանչեց մի դազար, վազիրի վիզը զարկել տվեց... Դարին հետ իշ կոռծ որ պատահեր, ալբըհալը վըրա կլխի հրաման չէր տա, կըմեզեր, խազար անքամ ծանդր-թեֆտը կաներ, նոր ինչ պեթք էր, էն կաներ:

—Համփերթոնը գանք ի, —էրկու խոսքեն մեկ կասեր թաքավորը դարեն ետ:

